



Armenian General Benevolent Union of Canada Inc. Toronto, Ontario
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
930 Progress Avenue, Scarborough, Ont. M1G 3T5

Ապրիլ 15, 2008

Ազնուափայլ Տիկին Սեդա Բասթալեան-Գանթարճեան
Գեղարուեստական Տնօրէնուհի եւ Պարուսյց
Շուշի Պարախումբի
Նիւ Եորք

Ազնիւ Տիկին Սեդա,

Վերապրումի, հաւատքի եւ ստեղծագործութեան ուժեղ բեմադրութիւն մը

Ապրիլ 13ին Թորոնթօհայութիւնը ապրեցաւ հպարտութեան, հիացումի եւ
հոգեպարար անմոռանալի օր մը:

Արդարեւ Շուշի պարախումբի ելոյթը զարմանք եւ հիացում պատճառեց մեր
Թորոնթօհայ գաղութին: Պատիւ էր մեզի համար հրաւիրել ձեզ եւ մաս կազմել
Շուշի Պարախումբի 15-րդ տարեդարձի առիթով պատրաստուած համերգներուն:

Պարերու շարանները, մէկը միւսը գերազանցող իրենց ելոյթներով, պարարուեստի
նրբութեամբ, հագուստներու պլազանութեամբ եւ ներդաշնակութեամբ գրաւեցին
ներկաներուն սիրտերը: Իսկ հայրենասիրական երգերն ու ասմունքները եկան
փաստելու որ Հայ Հոգին անպարտելի է մեր բոլորին մէջ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Թորոնթօյի մասնաճիւղի
անունով այսու կուգամ մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու եւ
շնորհատրելու ձեր իրագործումներն ու նուիրումը հանդէպ պարարուեստի:

Յաջողութիւն կը մաղթենք ձեր ապագայ ծրագիրներուն:

Սալբի Տէր Ղազարեան
Վարիչ Տնօրէնուհի